չադրութեամբ ընթերցմունք, և փառաւոր նորահնար քննութիւնք, վասն զի մենք ոչ թէ «չենք կարողացել ձեռք բերելու այդ յօդուածը», այլ ասել ենք թէ, «բայց դժբաղդաբար մի քանի հանգամանաց պատճառաւ, չկարողացանք արտագրելով տպագրել այս տեղ, որի համար շատ ենք ցաւումա. այս տեղ որն է «չկարողացանք ձեռք բերելու յօդուածը» որ յիշում էք. քանի որ, մենք մինչև անգամ արտագրելով մի քանի տող նոյն յօդուածից խորհուրդ ենք տուած կարդալու 33 34 35 և 36. երեսներումը յիշեալ գրքի մէջ *), Դու Պ. վարագուրեալ բարեկամ, կամ գիտութեամբ ես մեր խօսքերը այլայլած, կամ կարել ի է թէ, Դու ինքդ ես այլայլուած, չգիտեմ, ինչ և իցէ, բայց պէտք է միշտ զգուշութեամբ և խոհեմութեամբ չարժել ընթերցող անպատառ հասարակութեան առջև։

(Մնացեալն է յԵրուսաղէմայ)։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻՔ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ

ԿՏԱԿ.

Աղէքսանդրիա բնակեալ Թալասցի Մեծ. Մ. Յակոբ աղայ Աշրգեան այն վեհսիրտ անձանց մին է, որք ազգին յառաջադիմութեան համար ունեցած փափաքին գործով կարդիւնաւորեն, և անմահ անուն ու յիշատակ կը թողուն ազգին մէջ։

Իր անձնական հարստութենէն 2657 Օսմ. լիրա*) կտակաւ Ս. Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանին կը նուիրէ հետևեալ կտակագրով, զոր Երուսաղէմի Սիօն ամսագրի մէջ հրատարակուած տեսնելով կը փութանք մենք ալ հրատարակել։

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ
ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ, ԱՄԷՆ։

Ես ստորագրեալս՝ Մահտեսի Յակովբ, Աշրգեան տոհմէն, բնիկ Կեսարիոյ Թալաս գիւղացի, և այժմ բնակիչ Աղէքսանդրիոյ, մահկանացու ըլլալս գիտնալով և առ Ազգն իմ ունեցած պարտաւորութիւնս ճանաչելով ինքնայօրդոր և յօժար կամքս ու խորհրդովս կտակաւ կը թողում Սուրբ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի յառաջադիմութեան համար երկու հազար վեց հարիւր յիսուն եօթն Օսմ. ոսկի (2657)։

Իմ փափագս և նպատակս, երկար ժամանակէն ի վեր Ազգիս հաստատուն բարիք մը ընել՝ և նը-

(*) Մինչեւ անգամ, որքան օրինակ կամենաք, կարող էք մեզանից ծախու գնել, այլ ոչ թէ չենք կարողացել ձեռք բերելու։

(*) Հաշուելով զմի հատ Օսմ. լիրայն 7 ռուբլի, 18599 մանէթի չափ կը բռնէ։ Ե. խմբ.

ւիրական պարտքս կատարել ըլլալով, կտակիս արդիւնաւորութեան և յարատեւութեան համար զայն հետևեալ պայմաններու վրայ կը հաստատեմ և կը հիմնեմ։

Ա.— Իմ՝ կամքս է որ իմ կտակած գումարէն երկու հազար Օսմանեան ոսկին իբրև մայր գումար և դրամագլուխ ամենևին չպիտի պակսի, այլ միշտ օրինաւոր շահեցողութեան մէջ պէտք է մնայ։ Իսկ 657 ոսկի գումարէն ի բաց հանելով Ս. Աթոռոյն տպարանին կցուած մասին նորոգութեան և ընդարձակութեան ծախքը 274 ոսկի, որ իմ հաճութեամբ և գիտութեամբ եղած է, մնացեալ 383 ոսկին և ընդ նմին բուն դրամագլխոյն ներկայ տարւոյս (ի 12 էն Յուլիսի 1871 ի 12 Յուլիսի 1872 ամի) շահը՝ 200 ոսկի, ընդ ամենն 583 ոսկի առ ձեռն պատրաստի գումարն արդէն իսկ ի գործ դնել և շահաբեր շինուածքներ կառուցանել յօգուտ Ժառանգաւորաց Վարժարանի Ս. Յակովբեանց։

Բ.—Իմ՝ կամքս է, որ 200 ոսկի դրամագլխոյն բերած տարեկան 200 ոսկի շահով շարունակաբար նորանոր շէնքեր շինուին, և նորակառոյց շինուածոց բերած տարեկան եկամուտով՝ թէ հարկ եղած ժամանակ շէնքերը նորոգուին, թէ Վարժարանի ամենակարևոր պէտքերը հոգացուին, և թէ շարունակ օգտակար գրքեր տպուին Սուրբ Աթոռոյն Տպարանին մէջ, և գարձեալ նոյն գրեանց արդիւնքը միմիայն նոյն Վարժարանի պայծառութեան և յառաջադիմութեան համար գործածուի և ոչ ուրիշ որ և իցէ բանի։

Գ.—Կամիմ՝ և կը պարտաւորեմ միանգամայն, որ Սուրբ Աթոռը ամենայն օրինաւորութեամբ և հաւատարմութեամբ գործադրելով իմ՝ կտակս, արդիւնաւորէ և բեղմնաւորէ, որպէս զի տարուէ տարի Վարժարանին արդիւնքն աւելնայ և ապագային մէջ Վարժարանը, ըստ նախնական նպատակին և ըստ հիմնական կանոնին, կարող ըլլայ Հայաստանի գաւառներուն մէջ ալ նորանոր ճիւղեր ունենալ։

Դ.—Կը կամիմ որ իմ այս կտակիս արդիւնքովը Վարժարանին օգտին համար տպուած գրքերուն ամեն մէկուն ճակտին վրայ իմ ազգատոհմս անունը դրոշմուի, ի յաւիտենական յիշատակ կենդանեաց և ննջեցելոց մեր Աշրգեան տոհմին։

Ե.—Իմ՝ սոյն կտակիս օրինաւոր գործադրութեան և անխափան արդիւնաւորութեան համար Կտակակատար կը կարգեմ Սուրբ Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց Առաքելական Ս. Աթոռոյն ներկայ Եպսի Պատրիարք Սրբազան Աբրեպիսկոպոսը, ապագայ իւր Յաջորդները, ներկայ Տնօրէն Ժողովը և իւր Յաջորդները, Դպրոցի ներկայ և ապագայ Տեսչութիւնը, միով բանիւ նոյն Վանքին համայն անձնուէր և հաւատարիմ միաբանական Ուխտը, որք պարտաւոր են հարկաւորապէս հսկել իմ Կտակիս անթերի գործադրութեանը ամենայն արթնութեամբ, և ամեն տարի օրի-

նաւոր և կարգաւոր արձանագրութեամբ հաշիւ տալ ինձ, իմ՝ ժառանգներուն և Աշրգեան տոհմի մերձաւոր ազգականներուս։

Զ.—Ցանուն արդարութեան և հաւատարմութեան՝ առաջի Աստուծոյ և համայն Հայ ազգութեան կը պարտաւորեմ իմ Կտակակատարներս, այսինքն Սրբոց Յակոբեանց Վանուց ներկայ և ապագայ Սրբազան Պատրիարքները, Ժողովները, Դպրոցի Տեսչութիւնները և բոլոր միաբանական Ուխտը, որ ի սէր Աստուծոյ և յօգուտ ազգին ջանան, աշխատին ամենայն սիրով և հաւատարմութեամբ գործադրել իմ Կտակս բուն իմ կամցս և նպատակիս համաձայն, որ է միմիայն իմ ազգիս մանկանց մտաւոր և բարոյական բարգաւաճումը։ Կը պարտաւորեմ զիրենք որ բնաւ իրաւունք չունենան իմ նպատակիս ու պայմաններէս խոտորիլ և ուրիշ բանի գործածել զայն։ Իսկ եթէ դժբաղդաբար ըլլայ որ, որ և իցէ ժամանակ շեղին այս իմ նպատակէն՝ որ չեմ յուսար, այժմէն՝ թէ իմ ժառանգներս և թէ բոլոր Հայ ազգութիւնը դատախազ կը կարգեմ, որ մի միայն այսպիսի զանցառութեան կամ պարտաղանցութեան դէպքերու մէջ իրաւամբ հսկեն իմ սոյն Կտակս բուն իմ նպատակիս գործադրելու համար։

Ա. Այս է իմ երկարժամանակեայ փափաքս, ազատ կամքս և ինքնայօժար որոշումս իմ երկար խորհելովս, առողջ և լուրջ դատողութեամբս այսպէս որոշեցի և կը հաստատեմ ջերմեռանդն սիրով. ուստի իմ ժառանգներս կամ ազգականներս բնաւ իրաւունք չունին իմ այս ինքնայօժար Կտակս խափանել և իմ նուիրական կամքս բռնաբարել, մանաւանդ թէ իրենք ալ պարտաւոր են հաստատութեանը և յարատեւութեանը նպաստել բանիւ և արդեամբ. վասն զի այս իմ՝ սեպհական իրաւունքս է և աշխատանաց ու քրտանց արդիւնքն, զոր ես մարդկային պարտքս ճանաչելով՝ սիրով և յօժարութեամբս կտակելով կը նուիրեմ յօգուտ Ժառանգաւորաց Վարժարանին Ս. Երուսաղէմի։ Գոհ եմ Աստուծմէ, շնորհակալ եմ իւր առատ պարգևէն, որ արդիւնաւորած է իմ աշխատանքս, և ահա ես ալ յօժար կամօքս՝ մտաց և սրտի ինքնախորհուրդ համոզմամբս և ուրախ հոգւով նոյն աշխատանաց արդիւնքէն մասն կը հանեմ իմ սիրելի ազգիս մանկանց կրթութեան և դաստիարակութեան համար։

Ուստի ահա կենդանութեան ատենս, մարմնոյ և մտաց առողջ ժամանակիս, հասուն խորհրդովս գրեցի. կը ստորագրեմ, կրկնեմ և կրհաստատեմ սոյն Կտակս, իմ իսկական ձեռամբս և կնքովս։

ՅԱԿՈԲ ԱՇՐԳԵԱՆ.

12 Օգոստ. 1871. Ցերուսաղէմ.

Գրեցան հինգ օրինակ, յորոց մէն մի քառանի ի Պարբերաբերանի, ի Խորհրդարանի, յեկեղեցւոջ ի Վարժարանի և առ քարեպաշտ Կտակարարն։

ՏԻՕՖԻԼՈՍ ՄՈՐԹՄԱՆ

ԵՒ ՎԱՆԱՑ ՍԵՊԱՀԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

(Ա. Ֆոնտ-Ֆոցէլ։)

Կարողս 10դի թագաւորութեան ժամանակ էր Տէրութեան պաշտօնարանը (մինիսթէր) որոշեց բազմահմուտ Գերմանացի Շուլց արևելագէտը յուղարկել այս խնդրոյս համար, որն որ առաջին անգամ գնաց և հինգամեայ դեգերանօք, օրինակելով Վանայ և ուրիշ մօտակայ արձանագրութիւններ երբ իր հետազօտութիւնները աւելի խորը մտել ուզելով՝ աշխարհին ներքսակողմը յառաջեց, իր գիտութեանց սիրոյն ծարաւը և փափագը մեր դժբախտ հայրենեաց մէջ իրեն սուղի նստաւ. վասն զի այդ խուժադուժ Քիւրտի ցեղերէն մէկուն զոհ եղաւ՝ ի սուգ համայն լուսաւորեալ Եւրոպիոյ։ Բայց բարեբախտութեամբ մը իր անուանները կարենալով ազատել, առաջին անգամ այդ պատկառելի հնութեան նշխարք՝ զլեխաւորապէս Վանայ արձանագրութիւնները պարզեցան Եւրոպիոյ իմաստնոց առջին՝ նիւթ իրենց հետաքննութեան և մանրազնին խուզարկութեանց։ Այդ արձանագրոց այլ և այլ ընդօրինակութիւնները, սկսեալ Շուլցի տախտակներէն, հետևաբար Բեղրսպուրգի ուսումնական ճեմարանին դաղափարել տուածները, ինչպէս նաև Պեռլինի ուսումնական ընկերութեան Անգղիացի (այս ինչ անուն) Քօլօնէլին, Վ. Հ. Ներսիսի ուղևորութեանց մէջ օրինակածները, Էջմիածին հրատարակեալ Արարատ ամսաթերթի մէջ տպագրուածը Մեսրոպ վարդապետի պատկերին հետ ի միասին՝ Արմաւրայ արձանագրութիւնք վերտառութեամբ ևն. ասոնց ամենն ալ, (զորոնք պարզեր դրեր էր գրասեղանին վրայ,) Եւրոպիոյ իմաստունք՝ Նինուէի և Բաբելոնի մէջ գտնուած արձանագրութեանց ոճովը ընթեռնլով՝ անիմաստ բառեր՝ ձայներ արտադրուեցան որով որ անհասկանալի մնացին։ Ուստկից կը հետևէր կամ՝ այն է որ կորսուած լեզու մը պէտք է ըլլայ կամ թէ ընթերցման եղանակին մէջ սխալմունք կար։ Տօքթէօր Մորթման իմաստասիրելով որ կորսուած լեզու մը չէր կրնար ըլլալ, վասնզի այն ազգը որ այդ երկրին բնիկ տէրը էր ի վաղուց հետէ՝ կորսուած չէր՝ և այն Հայ ազգն էր, աւելի հաւանական կարծեց ընթերցման եղանակը սխալական լինել, որուն բանալին պէտք էր գտնել. ահաւասիկ այս ենթադրութեան վրայ հաստատ՝ սկսաւ իր անխոնջ և բազմամեայ հետազօտութիւնները։ Հոս համառօտ մը այս բևեռաձև նշանագրաց մեկնութեան մտաւ թէ՝ քանի տեսակ գիր կամ տառ կային մէյ մը Ա. իսկալ խորհրդաւոր գաղափարի յայտարար նշանագիրք՝ հիէրոգլիֆ ըսուած՝ ինչպէս կրնայ համարուիլ մեր լեզուին մէջ աշխարհաբարի գրութեան ձևը ևն. Բ. թաւանշան «չիֆֆրէ», ըսուածը, որ այլ և այլ ազգեր իրենց զանազան լեզուօք տարբեր ձայնով